ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ի «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 47-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No «
» 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 47-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի «Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 47-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Հրամանով հաստատված հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը «լեզվային առանձնահատկությունները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության առկայությունը» բառերով.
- Հրամանով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«2.1. Այն հաստատությունները, որոնք աշակերտների և (կամ) մանկավարժների ուղեփոխադրման նպատակով իրենց հաշվեկշռում ունեն տրանսպորտային միջոցներ և ՀՀ պետական բյուջեից ստանում են վառելիքի և (կամ) վարորդի աշխատավարձի և (կամ) այլ տրանսպորտային ծախսերի գծով փոխհատուցում, չեն հանդիսանում սույն կարգի 1-ին կետում նշված միջոցառման շահառու:»

- Հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր կմ-ի համար 25 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս քան 200 ՀՀ դրամը (հաշվարկված երկու ուղղությամբ) յուրաքանչյուր ներկա ստացած

օրվա համար,»

- Հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով.

«4) տվյալ բնակավայրից տվյալ դպրոց երթևեկող սույն կարգի 2-րդ կետում ընդգրկված ուսուցիչների և դպրոցահասակ երեխաների թիվը 4 և դրանից պակաս լինելու դեպքում՝ ոչ պակաս քան 1000 ՀՀ դրամը (հաշվարկված երկու ուղղությամբ) յուրաքանչյուր ներկա ստացած օրվա համար՝ հավասար չափերով բաշխված այդ ուսուցիչների և դպրոցահասակ երեխաների միջև։»

- Հրամանով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«4.1. Սույն կարգի 4-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն հաշվարկված սակագների միջև տարբերության առկայության դեպքում կիրառվում է ուսուցիչների և աշակերտների համար նախընտրելի տարբերակը։»

- Հրամանով հաստատված հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ուսումնական հաստատությունը մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը ըստ պատկանելիության կառավարման լիազոր մարմին է ներկայացնում տվյալ տարվա ընթացքում սույն կարգին համապատասխան փոխհատուցում ստացող անձանց մասին տեղեկատվություն՝ Ձև 1-ին համապատասխանև, իսկ մինչև սեպտեմբերի 20-ը՝ տվյալ կիսամյակի ընթացքում սույն կարգին համապատասխան փոխհատուցում ստացող անձանց մասին ճշտված տեղեկատվություն՝ նույն ձևաչափով, սակայն նշելով միայն հունվարին ներկայացրած տվյալների փոփոխությունը և/կամ լրացումը։»

- Հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը «5-օրյա ժամկետում» բառերից առաջ լրացնել «ամփոփված տեղեկատվությունը» բառերով.

- Հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետը «վարչությունը» բառից հետո լրացնել «Նախարարության ենթակայության հաստատություններից ստացված և» բառերով.
- Հրամանով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«10.1. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը մարզպետարաններից ստացված և սույն կարգի 8-րդ կետում նշված ցուցակների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում ներկայացնում է իր առարկությունները մարզպետարաններին, և մարզպետարանը պետք է հինգօրյա ժամկետում լրամշակի ցուցակները և ներկայացնի նախարարություն:»

- Հրամանով հաստատված հավելվածի 11-րդ կետում «ամիս» և «ամսվա» բառերը փոխարինել համապատասխանաբար «եռամսյակ» և «եռամսյակի» բառերով, իսկ «Ձև 1» բառերը՝ «Ձև 2» բառերով.
- Հրամանով հաստատված հավելվածի 12-րդ կետում «ամենամսյա» բառը փոխարինել «եռամսյա կտրվածքով» բառերով.
- Հրամանով հաստատված հավելվածի 13-րդ կետում «ամիս», «ամսվա» և «ամենամսյա» բառերը փոխարինել համապատասխանաբար «եռամսյակ», «եռամսյակի» և «եռամսյա կտրվածքով» բառերով.
- Հրամանով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«14.1. Դպրոցի շենքի հիմնանորոգման/վերակառուցման կամ նորի կառուցման դեպքում շենքի ապամոնտաժման պատճառով այլ բնակավայրում տեղակայված դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպելում համար 14-րդ կետի կիրառման շրջանակներում ձեռքբերվող ուղեփոխադրման ծառայությունների արժեքը մինչև տվյալ դպրոցի շենքի շահագործման հանձնելը հաշվարկվում է փոխադրման նպատակով իրականացված մրցույթի արդյունքում ձևավորված գնի հիման վրա՝ համաձայնեցնելով նախարարության հետ:»

- Հրամանով հաստատված Ձև 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:
- Հրամանը լրացնել Ձև 2-ով՝ համաձայն Հավելված 2-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ **Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ**

Հավելված 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

___ _____ 2021 թ.

N _____Ն հրամանի

ՁԵՎ 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՎՅԱԼ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐԳԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Աշակերտի անունը, ազգանունը	Դասարանը	Փաստաթղթի վայրը
1			
2			
3			
4			
5			
….			
N			
ԸՆԴԱՄԵՆԸ			

Հ/Հ	Մանկավարժի անունը, ազգանունը	Դրույքը	Տվյալ հաստատ տվյալ առարկա ուսուցիչ լինելու տեղեկատվությ «այո» կամ «ոչ» դեպքում նշեկ ն դասավանդվող
1			
2			
3			
4			
5			
….			
N			
	ԸՆԴԱՄԵՆԸ		

ՏՆՕՐԵՆ՝

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

_____

Անուն, ազգանու

_____

Անուն ազգանուն

Հավելված 2

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

___ _____ 2021 թ.

N _____Ն հրամանի

ՁԵՎ 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆԱԽՈՐԴ ԱՄՍՎԱ ՓԱՍՏԱՑԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Աշակերտի անունը, ազգանունը	Դասարանը	Փաստաթղթի վայրը
1			
2			
3			
4			
5			
….			
N			
ԸՆԴԱՄԵՆԸ			

Հ/Հ	Մանկավարժի անունը, ազգանունը	Դրույքը	Փաստացի բնա վայրը
1			
2			
3			
4			
5			
....			
N			

ԸՆԴԱՄԵՆԸ

ՏՆՕՐԵՆ՝

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

_____
Անուն, ազգանու

_____
Անուն ազգանու

ՏՆՕՐԵՆ՝

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

_____ _____
Անուն, ազգանունը ստորագ

_____ _____
Անուն ազգանունը ստորագ

_____
Կ.Տ.